

# Армянский Колледж

## Учитесь АРМЯНСКОМ ГОВОРИТЬ НА ЯЗЫКЕ

### +7 904 506 91 28

#### АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

# Ռ ռ



### ՌԵՏԻՆԸ

Ռետինը մի շատ կարևոր Օգնական է իսկական: Մխալ գտան մի տեղ թե չէ՝ Մեջտեղ գալիս ինքնակամ, Հալածում է սխալներին Գծագրից կամ նկարից՝ Համոզված, որ փրկում է մեզ Գալիք ինչ-որ վթարից . . .

# Ս ս



### ՍԱՐԵՐԸ

Սարը հենվել սարի ուսին Արևին է հետևում, Որ պահվում է կամաց-կամաց Մյուս սարի ետևում:

- Արևն ինչու՞ է սար սիրում,- Հարցնում է սարը սարին: - Այս աշխարհում սարերն են լոկ Պատվարները հուսալի. . .

# Վ վ



### ՎԱՅ-ՎԱՅԸ

-Վայ-վայ, վայ-վայ, Վայ, վայ-վայ... Վայր էր ընկել մի վայ-վայ:

Լալիս էր, ոնց էր լալիս, Ոնց էր գլխին վայ տալիս:

-Զգվեցորի,- ասացին,- Վերջ տուր հիմար քո լացին. . .


-Վայ-վայ,- ասաց նա անձար,- Չկա մեկը ինձ խղձա. . .



Рубрику ведет преподаватель армянского языка Арmine Варданян


Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

#### КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАОНЯН




#### Кроссворд № 28

- По вертикали:**  
1. Рентген.  
2. Завтрак.  
**По горизонтали:**  
1. Резинка. 3. Ручей



#### Кроссворд № 29

- По вертикали:**  
1. Остроумный.  
2. Лгун, врун.  
**По горизонтали:**  
3. Силос.



#### Кроссворд № 30

- По вертикали:**  
1. Возвращение.  
2. Курица.  
**По горизонтали:**  
3. Роза. 4. Левый.



Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симаонян

### Ուշադրություն

Տեղեկացնում ենք, որ ս.թ. հուլիսի 5-ին և 6-ին ՀՀ սահմանադրական դատարանը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում ՀՀ նախագահության շրջանակներում, նախապատրաստվում է Երևանում անցկացնել համաեվրոպական համաժողով: Քննարկումների արդյունքում որոշում է կայացվել համատեղել նշված խորհրդաժողովի և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ միջոցառումների շարքում՝ Իրավաբանների համահայկական երկրորդ խորհրդաժողովի աշխատանքները: Արդյունքում իրավաբանների համահայկական համաժողովը կկայանա հուլիսի 5-6-ին: Նոր օրակարգի համաձայն հուլիսի 5-ին տեղի կունենա Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ գործունեության հարցերի ու առաջնահերթությունների քննարկում: Բոլոր այն անձինք ու շահագրգիռ կազմակերպությունները, որոնք մասնակցության հայտեր են ներկայացրել, լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել հետևյալ հեռախոսահամարով՝ +37410 58 13 91, ֆաքս՝ +37410 52 52 07, E-mail՝ info@edu.am, ՀՀ, Ափյուռքի հետ կապերի բաժին:

### Հայերն ստեղծել են աշխարհում առաջին բաս քանոնը

Հայաստանում ստեղծվել է աշխարհում առաջին բաս քանոն երաժշտական գործիքը: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնեց երաժիշտ Արա Գևորգյանը: Գաղափարը երաժշտի մոտ առաջացել է տարիներ առաջ, երբ քանոնահարուհի Հասմիկ Լեյլոյանի հետ պատրաստել են մի ստեղծագործություն 50 քանոնով: «Զգացի, որ ինչ և որ բան պակասում է այդ ստեղծագործությանը, չկար բասային ֆունկցիան», - նշեց Արա Գևորգյանը: Ցանկալի արդյունքին հասան համակարգի օգնությամբ հնչողությունը կարգավորելով: Հենց այդ ժամանակ էլ երաժշտի մոտ միտք հղացավ Նոր ազգային բասային գործիք ստեղծել, քանի որ մինչ այդ բասային ֆունկցիան կատարում էր կոնտրաբասը: «Մտածեցի ինչու չունենանք մեր ազգային բասային նվագարանն ու դիմեցի ազգային նվագարաններ պատրաստող վարպետ Ալբերտ Չաքարյանին, ով էլ մեծ պատրաստակամությամբ հանձն առավ գործիքի պատրաստման դժվարին գործը», - ասաց Արա Գևորգյանը:

Արդեն պատրաստ է աշխարհում առաջին բաս քանոնը, որը պատրաստված է Սոչիի թխկու փայտից, կոնտրաբասի լարերից և իր կառուցվածքով նման է քանոնի: Գործիքի ինքնարժեքը բավականին թանկ է, մոտ 1000 դոլարին համարժեք դրամ, որի մեծ բաժինը կազմում է կոնտրաբասի լարերի գումարը: Այդ իսկ պատճառով, ինչպես նշում են Արա Գևորգյանն ու Ալբերտ Չաքարյանը, նախատեսվում է հատուկ քան քանոնի համար լարեր արտադրելու խնդրանքով դիմել համապատասխան կազմակերպություն:

Մայիսի 29-ին գրանցվել է բաս քանոնի գյուտը վարպետի Ալբերտ Չաքարյանի անունով, քանի որ ինչպես Արա Գևորգյանն է հաստատում, գործիքի նախագծումն ու պատրաստումը կատարվել է հենց վարպետի կողմից ութ ամսում: Պատրաստվում է երկու գործիք. մեկը, որն արդեն պատրաստ է, պատկանելու է Խ. Աբալյանի անվան պետական մանկավարժական համալսարանին, որով դասավանդելու են քանոնահարուհիներին: Երկրորդը նվիրվելու է Թովմա Պողոսյանի գլխավորած «Ազգային նվագարանների պետական նվագախմբին»: Գործիքներն ունենալու են իրենց անունները: Նախաձեռնողներն որոշել են գործիքները կնքել հայ կանանց անուններով: Առաջին գործիքի անունն է Ավվարդ, որը վարպետի հարսի անունն է: Երկրորդ գործիքը կունենա այն բարերարի կնքը անունը, ով կհովանավորի գործիքի ստեղծման ծախսերը:

Նախաձեռնողները նախատեսում են առաջիկայում գործիքը ներկայացնել հանրությանը գեղեցիկ կազմակերպված ջոկի միջոցով՝ քանոնահարուհիների, պարային խմբերի մասնակցությամբ:

«Արմենպրես»



... Քելբաջարի գրավումից հետո տղաները պարզ-արվում են 3000-ական ուղբիով: Այդ օրը դիրքում գտնվող տղաներից մեկը, մի եղևիկ նկատելով, կրակում է ու վրիպում: Լուրը հասնում է Մոնթեին: Իր մոտ կանչելով ձախողակ «ոտսորդին» ասում է.

- Լսած եմ, պետական փամփուշտով որս ըրած ես, քեզ ո՞վ է իրավունք տվել:  
- Հրամանատար, Քելբաջարից այնքան փամփուշտ, զինամթերք ենք վերցրել, որ մի կրակոցն ի՞նչ է:

- Ձինվորը զինվոր է, երբ ունի պետական մտածողություն: Այդ փամփուշտները հայրենիքի պաշտպանության համար են: Որպես պատիժ քո ստացած 3000 ուղբուն կավելացնես ևս 2000 և կմուծես որպես տուգանք:

Այս ու նման պատմություններ գործասում հաճախ կսես: Մոնթեի հետ կապված ամեն ինչ՝ խոսք, արտահայտություն ու դրվագներ, քան տարի անց էլ հետաքրքրում է զինվորներին ու սպաներին: Մոնթեի հանդեպ առանձնահատուկ սեր ու վերաբերմունք կա բոլոր գործամասերում: Չորամասերի պատերին, ի թիվս այլ հերոսների, նրա նկարներն ու թևավոր խոսքերն են: ԼՂՀ Մարտունի 2-րդ զորամասը պատերազմի տարիներին հիմնադրել է Մոնթե Մելքոնյանն, ու այստեղ այսօր էլ շարժվում են

### Օրերի հետ

## Մոնթե. Ձինվորը զինվոր է, երբ ունի պետական մտածողություն

ավոյական մտածելակերպով ու համոզմունքներով: Մարտունի 2-ում Ավրիլի հանդեպ առանձնահատուկ սեր ու հարգանք կա: «Իսկ դուք գիտե՞ք, որ այս զորամասը Մոնթե Մելքոնյանն է հիմնադրել», զորամասի յուրաքանչյուր երկրորդ զինվոր քեզ նույն հարցը կտա ու կասի, որ զինվորների սիրելի գրքերից է «Ավրիլ»:

Շարքային Արման Սահակյանը մինչև բանակ գալը Մոնթեի մասին շատ բան չգիտեր: Գիտեր, որ սփյուռքահայ է ու պատերազմի ժամանակ է գոհվել: «Մի ժամանակ դասախոսություն էին կազմակերպել ու պատմում էին Մոնթեի մասին, մեր հրամանատարներից մի քանիսը պատմեցին կոնվերտի ժամանակ Մոնթեի մասին, իր պատմություններին, ընտանիքի, թե ոնց էր Մոնթեն կովի դաշտում, ինչ խիստ, բայց լավ հրամանատար էր:

Դե, տղերքից շատերը չգիտեին Մոնթեի մասին, մենակ լսել էինք: Հաջորդ օրը որոշեցի՝ գնամ զորամասի ակումբում գտնվող գրադարանն ու Մոնթեի մասին գիրք վերցնեմ, կարդամ: Մինչև այդ գիրքն ինձ հասավ, մի երկու ամիս անցավ», ծիծաղելով պատմում է Արմանն ու շեշտում, որ գրքում հատկապես հավանեց Մոնթեի թևավոր խոսքերը:

«Երբ մենք կորցնեց Արցախը, մենք կորցնեց հայ ժողովրդի պատմության վերջին էջը», արտասանեց Արմանը՝ հավելելով, որ դիրքեր բարձրանալիս հաճախ է այս խոսքը հիշում:

Արցախյան ազատամարտը Մոնթեին հայրենիք վերադարձրեց: Սկզբնական շրջանում նրա գալն այնքան էլ ջերմ չընդունվեց: Նրա նկատմամբ հույս ու հավատ չկար, ամերիկահայ Մոնթեի բնավորության շատ գծեր անսովոր էին հայ իրականության համար, հրամանատարներն ու ազատամարտիկները չէին հասկանում նրան, սակայն ժամանակն ամեն ինչ իր տեղը դրեց, ու մի քանի դժվար մարտերից հետո Մոնթեի ցուցաբերած խիզախությունն ապացուցեց, որ երիտասարդն իսկական զինվորական ու

արժանի հայրորդի է: Մոնթեի համարձակության մասին շատերն էին զարմանքով խոսում: Ազատամարտիկներից շատերին ապշեցրել էր , որ Մոնթեն, ապրելով հայրենիքից հեռու, այդքան սիրում էր իր երկիրն ու այդչափ հրաշալի տիրապետում պատմությանը: 1992-ի հունվարին Մոնթեին հանձնարարվում է Մարտունու շրջանի ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի պարտականությունը: Օմարի լեռնանցքի նվաճումը նրա ղեկավարած ամենապատասխանատու և փայլուն գործողություններից էր:

Դեռևս կենդանության օրոք Մոնթեն լեգենդար հերոս էր: Նրա խիզախությանն ու հայրենասիրությանը զուգահեռ՝ մեծ դեր խաղաց նաև մեծ հավատը իր զինվորների և ժողովրդի հանդեպ:

1993-ի հունիսի 12-ին, Աղդամի կրակակետերի ոչնչացման լայնածավալ գործողություններից հետո Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանն իջնում է հրամանատարական բարձունքից՝ անձամբ ստուգելու իրավիճակն ու դիրքավորելու իր մարտիկներին: Աղդամի մերձակա Մարգիլի գյուղի ծայրին անսպասելիորեն հանդիպում է հակառակորդի ԲՄՊ-1 զրահամեքենային՝ լի զինվորներով: Մեքենայից իջնելով՝ Մոնթեն դիրքավորվում և կրակահերթ է բացում: Մահավասար մարտում զրահամեքենայից արձակած հրթիռի բեկորից Մոնթեի սրտի զարկը կանգ է առնում:

Երախտապարտ արցախցին, պատերազմի ավարտից հետո, ի հիշատակ Մոնթեի, Մարտունի շրջկետրոնը կոչել է Մոնթեաբերդ, իսկ կենտրոնում կանգնեցված է նրա հուշարձան-կիսանդրին: Մոնթեն Հայաստանի ու Արցախի հանրապետությունների ազգային հերոս է, պարգևատրվել է «Հայրենիք», «Ոսկե արծիվ» և ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշաններով: Նրա անունն են կրում ՀՀ ռազմական քույրեր, Երևանում և Արցախում բազմաթիվ դպրոցներ:

Հասմիկ Հարությունյան